թիւնը, 9. «Մեղու» ընկերութեան վարչութիւնը, 10. Տաճկահայոց օգնող մասնաժողովը, 11. Նպաստամատոյց Ցանձնաժողովը, 12. Հայոց ազգագրական ընկերութիւնը, 13. Տնայնագործական ընկերութիւնը. 14. Դրամատիքական ընկերութիւնը, 15. Մխական ուսումնարանների հոգաբարձութիւնները, 16. երեցփոխանների խումբը, 17. Լոյս ընկերութիւնը։

—

Այս բոլոր ընկերութիւնների և հաստատութիւնների ներկայացուցիչները ս. թեմական Գարեգին Արքեպիսկոպոսի առաջնորդութեամբ ամսոյս 25-ին, յօբելեանի օրը պիտի մատուցանեն յօբելեարին մի ուղերձ, որի բնագիրը ռուսերէն թարգմանութեամբ, դրուած է մի հոյակապ կազմի մէջ։

Առաջ ենք բերում ուղերձի հայ բնագիրն ամբողջութեամբ։

—

ՊԱԾԱՌԱՓԱՑԼ ՏԷՐ,

ԿՈՄՍ ԻԼԼԱՐԻՈՆ ԻՎԱՆՈՎԻՉ

Ցայսմ աւուր լրման յիսնամեկի պաշտման Պայծառափայլութեան Ձերոյ ի շարս պանծալի զինուորութեան Ռուսիոյ առաջակայքս եկեղեցական, բարեգործական, դրպրոցական և կրթական հաստատութեանց Հայոց պարտիս վարկանիմք մատուցանել Ձեզ զջերմաջերմ իղձս մերոյ խնդութեան, մաղթելով Ձեզ աւուրս ընդ երկար վաստակոց արգասաւորաց յօգուտ մեծի Հայրենեաց մերոց։ Ի մեծահանդէս աւուրս չիք հնար՝ եթէ չյիշիցեմք խորին երախտագիտութեամբ զկոչումն բարձր, զոր յանձին կալայք յօրէ անտի ձեռնամուխ լինելոյ Ձեր ի կառավարութիւն կողմանցս Կովկասու։ Նրբազգաց և մարդասիրական ոգւով Ձերով ծանեաք 'Իւք զաղբերս վշտի եկեղեցւոյն և ժողովրդեանն Հայոց, և ոչ անխայեցէք յամե-

նայն ջան և ի զօրութիւն Ձեր՝ առ ի մեղմել ամոքել զտրտմութիւն վշտին և դարձուցանել անդրէն ի Հայաս ոչ միայն զընիկ աւանդս մեր, այլ և զվաղեմի վստահութիւնն ի մեզ զՊետութեան Ռուսիոյ։ Եւ անուն Ձեր, փառաւորեալ ճաճանչիւք սիրոյ և մարդասիրութեան, կեցցէ յաւէտ յերախտագէտ միտս ժողովրդեանն Հայոց։ Ի նշանակ այսր երախտագիտութեան մեք սահմանեցաք՝ զարդարել զդահլիճ տանն առաջնորդարանին Հայոց ի Տփխիս կենդանագիր պատկերօք Ձերովդ և ամենամեծարոյ ամուսնոյն Ձերոյ, կոմսուհւոյն Էլիսաւետայ Անդրէեվնայի զուգակցին Ձերոյ ի գործս մարդասիրութեան։ Ցուշ արասցեն նոքին ամենեցուն, որք մտանիցեն ի տուն անդր ժողովրդեան Հայոց, զփառաւորեալ անուանս Պայծառափայլութեանց Ձերոց, անյողդողդ հովանաւորացդ ամենայն ազանց, որք բնակեալ են ի բազմազգի երկրիս Կովկասու։

—

Ս. Առաջնորդը բացի այդ կարգադրութիւնից, հեռագրով պատուիրել է Թիֆլիսի թեմի բոլոր հայ ծխական-հոգևոր դպրոցների վարչութիւններին մարտի 25-ին մի օրով դադարեցնել ուսումը բոլոր դպրոցներում, նոյն կարգադրութիւնն արել է նաև Թիֆլիսի բոլոր հայ ուսումնարանների վերաբերութեամբ։